# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
## «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

23.11.2017թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին
Գնահատողները՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ, ՔԾԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, փոխգնդապետ Ա. Նիկոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
ՀՀ ԶՈՒ թիկունքի պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան:
Գնումների համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևավորման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևավորման բաժնի առաջատար մասնագետ, ՔԾԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Վարդանյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Գ. Վարդանյան)

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացության քննարկման և արդյունքների ամփոփման մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

**1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացության քննարկման և արդյունքների ամփոփման մասին.**

(Գ. Վարդանյան)

1.1 Հաշվի առնելով լիազորված մարմնի կողմից տրամադրված 03/27-1/20895-17 15.11.2017թ. գրությունը, հանձնաժողովը քվեարկության արդյունքում՝ 4 կողմ և 1 դեմ (դեմ քվեարկած գնահատող անդամ ՀՀ ԶՈՒ թիկունքի պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյանի հատուկ կարծիքը կցված է), որոշեց մերժել «Գյած» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 1:

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.**

(Գ. Վարդանյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 1:

Գնահատող — Վ. Գասպարյան

Գնահատող — Կ. Բրուտյան

Գնահատող — Ա. Մարգարյան

Գնահատող — Տ.Հարոյան

Գնահատող — Ա. Նիկոյան

Գնումների համակարգող՝ — Գ. Վարդանյան

**23.11.2017թ.**

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ԿԱՐԾԻՔ

(ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ)

Հանդիսանալով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/95» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ՝ «Դեմ» եմ քվեարկել նիստի արձանագրության 1.1-րդ և 2.1-րդ կետի վերաբերյալ, որի շուրջ ունեմ այլ՝ հատուկ կարծիք, մասնավորապես.

գնման առարկան հանդիսացել է խմելու ջուր, որը խիստ անհրաժեշտ է եղել ձմեռային ժամանակահատվածում անձնակազմին ապահովման համար, ինչպես նաև երկրորդ անգամ մրցութային գործընթաց կազմակերպելու համար ժամկետները բավարար չեն եղել:

Միաժամանակ նշված ծածկագրով մրցույթի տվյալ չափաբաժնի մասով երկրորդ մասնակից չի եղել, ինչը կարող էր ենթադրել երկրորդ մասնակցի միջոցով նշված նյութական միջոցի ձեռքբերումը:

**ՀՀ ՁՈՒ ԹՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**գնդապետ** **Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ**